



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 01 » դեկտեմբերի 2021թ. 183-Ձ

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով «Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության ՏՀ 01 «Էներգետիկա» հանձնաժողովի ԵՀ 04 «Շինությունների էներգաարդյունավետություն և ջերմաարդյունավետություն» ենթահանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 29-ի առցանց քննարկումների N3 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ընդունել և 2022 թ. հունվարի 1-ից գործողության մեջ դնել հետևյալ ազգային ստանդարտները՝

- ՀՍ ՌՍՕ 52000-1-2021 «Շենքերի էներգետիկ բնութագիր. Շենքերի էներգետիկ բնութագրի (ՇԷԲ) համալիր գնահատում. Մաս 1 Ընդհանուր հիմունքներ և ընթացակարգեր»,

- ՀՍ ՌՍՕ 52000-2-2021 «Շենքերի էներգետիկ բնութագիր. Շենքերի էներգետիկ բնութագրի (ՇԷԲ) համալիր գնահատում. Մաս 2. ՀՍ ՌՍՕ 52000-1 ստանդարտի պարզաբանում և հիմնավորում»:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի խորհրդական Հ. Զեյնալյանին:

ՏՆՕՐԵՆ
ՓԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ